

ԲԱԺԱՆՈՐԻՒԿՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12 Ֆր.  
Տարեկան 6 »  
Վեցամսեայ 6 »  
Արսասահմանի համար տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար Տարեկան 3 ֆր.  
Վեցամսեայ 1.50 »

Մանուգրան տղր առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. Ե. Երեսին անջի անգրամներու համար 20 0/0 զեղջ կըլլայ:

Վառճախի համար ձեռք 40 սանթիմ

# ՇԱՐՋՈՒՄ

ՄԱՐԿԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂՈՒԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ. ՏԱՐԻՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախակ և զրաւ զրկել հոլոք գրուրեանս հասցիին:

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Արսասահմանի համար ձեռք ( 20 ՍԱՆԹԻՄ ) Պուշկարիոյ համար ձեռք ( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրուրիմք ևս չեն տուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԵԿԻՎ ԿՃԱՐԷ

## ԻՆԵՂԱԹԻՒՐՈՒՄԻ ՈՐԿԻՆ

Վերջին վեց եօթը տարիներու շրջանին արտասահմանեան մամուլին ընծայած բազմակողմանի երեւոյթներուն մէջ առիկա չեմ տեղ բռնեց, խնդած իւրումի ոգին Բիշ անգամ պատահեցաւ որ կուտի. վիճաբանութեան բռնուող երկու թերթի կարեւորին ինքզինքնին ուղղամտութեան, ազնուութեան, անկեղծութեան և ասպետութեան կուռանի մը վրայ հաստատ անսայթաք պահել: Կուսակցական խուլ աններող հակառակութիւններ, ինքզինքը յաղթուած յայտարարելու ամօթը, բարոյական և նիւթական շահեր վտանգելու երկիւղը, այնպէս մը բրին որ էն չկարծած, էն չյուսացած անձնաբոյ խնդարութեան դիրքին և վերկարար միջոցին դիմելու անօրէնութեան անջեւ շրջակեցան:

Եւ վիճելու այս նուաստ մեթոտը շատ դիրութեամբ կրնար կիրարկուիլ այնպիսի միջավայրի մը մէջ որպիսին է արտասահմանը. երկրագունտին հեռուոր, մշտնեւրով իրարմէ անլրպիտուած կեդրոններուն մէջ ինկած հայ խմբակներ, զորս անօրինակ դէպքեր շլոյսնոտ դարձուցած են, կիրքերու, ուխտերու, ատելութիւններու ճարակ, տրամաբանելու, պատճառաբանելու անտրամադիր, բանաւորութեան պարզ, անդորր և երջանիկ հորիզոններէն հեռու, ամէնէն ալեխարշ տեսարաններէն մէկը ներկայացուցին որ երբէք զիտուած ըլլար իր ճամբան կորսնցուցած ոչխարներու հօտի մը խելայեղ կարգերուն մէջ. Ականջ խլացնող, ըզնջ թմրեցնող կանչուրուրքեր կարմիր ռումբերու պէս օղջ կը ճղբրտէին, կը սպոյթէին մեծաշառճ, բարկութեան, արկուն ճճող ատեցութեան սլաքներ մէկզմէկ կը խոչաձեւէին: Մտնաւորտարոս մը՝ ազնուկով, կրծով: Վարպ, անդիտակից մա-

քառուով լեցուն: Այս չէ՞ր և տակաւիէ առ չէ՞ արտասահմանի հայութեան և մանաւանդ մամուլին ներկայացուցած ողբալի տեսարանը: Սակայն, որովհետեւ այտասահմանի հայութեան ընդարձակ ու բազմերանգ հոգեբանութիւնը ապագային մասնաւոր ուսումնասիրութեանց առարկան պիտի դառնայ, հիմա կուտար երբեմն անոր մէկ քանի կարեւոր դրուագները վեր առնել, անոնց վրայ զննող վերլուծող ակնարկ մը նետել միշտ աւելորդ ախտանք մը չէ:

Ու, ինչպէս ըսի, անոր հոգեբանութեան մասնաւորութիւններէն մէկն է խնդարութիւն ուղին որ կը տիրէ զխաւորապէս մամուլին մէջ:

Աւելորդ է ըսել որ աշխարհի մէջ չկայ աւելի դիրքին բան մը քան խնդարութիւնը: Իստի մը յայտարարութիւն, չեղանք մը կանցառումը, ստորակէտի մը ջնջումը կրնան ահագին իմաստներ շարափոխել, ամբողջ գրուածի մը ոգին տակնուվրայ ընել, երկու թերթի մէջ վիճաբանութիւն մը կը բացուի՝ անձնական կամ կուսակցական խնդրի մը շուրջը: Մոլեղնարար կուռան կուռեն: Ընթերցողը մէկին և միւսին կը հետեւի անկուշտ հետաքրքրութեամբ, որուն հարկաւ զղուանքի զգացում մըն ալ կը խառնուի: Վերջապէս կը սպասու որ երկու հակառակ խօսուներէն մէկը՝ յաղթուած՝ զենքերը վար դնէ. Եւ որովհետեւ յաղթուած ըլլալու խայտառակութիւնը անտանելի բան մըն է որուն չուզեր ենթարկուիլ մարդ, երկու կողմերէն այն որ նահանջի քայլեր առնել ստիպուած է, յոնկարծ մէկ կողմ կը նետէ ուղղամտութիւն, անկեղծութիւն և ասոնց նման ութիւններ և բոլոր ուժովը կը փաթթուի ուրիշ կարգի ութիւններու, խաբեբայութեան, կողմնութեան, խնդարութիւնի եւնակ կը սկսի ուղղակի չպատասխանել իր հակառակորդին. բացէն,

հեռուէն բաներ կ'ըսէ, բուն խնդիրը մէկ կողմ կը գնէ, ու հակառակորդին անցեալը քրքրելով՝ ձախող պարագաներ, վարկաբեկիչ գրուագներ գտած ըլլալ կը հռչակէ հոն: Կամ թէ իր հակառակորդին գրածներուն փոխանակ ամբողջ մէջտեղ բերելու, անոնցմէ մասեր միայն կը զողնայ, մասեր որոնք իրենց այդ անշատ վիճակին մէջ կրնան աննպաստ, նոյնիսկ վտանգաւոր իմաստներ պարունակել, անգթութիւն, խաբեբայութիւն զրկուած ըլլալով իրենց լրացուցիչ հասուածներէն: Դիմաւոր կատարուած է: Ինչպէս հակառակորդը ամէնէն անկեղծ, ամէնէն ասպետական շեշտերը կ'առնէ, իր հակառակորդը՝ անոր իսկ զենքերովը հարուածելու խիղախ երեւոյթով մը: Ընթերցողը, որուն կը պակասն միջոցները ամէնաւ մեծ խմբով հետեւելու թերուղէմ գրուածներուն և զանոնք զէմ առ գէմ բերելով իրենց ամբողջութեանը մէջ զանոնք բազմաթիւ, անդիտակցաբար տիրել կ'ըլլայ և վատ հակառակ խօսուներէն ընտրած խնդարութեան մեթոտին զոհ կերթայ: Ասանկով վէճերը, կուռները անհունօրէն կերկարին թերթերու մէջ, կը խառնուին կը թմուկուին, պուռացող պուռացողի, քֆրոք քֆրոքի: Եւ անգիտակից խնդներ, տուրքեան ու վատութեան գիւրին սրտեր կը կարթուին ցածուութեան տիրուր ասպետներէն ու անոնց հետնիկեր յաւերժօրէն կը քահալաուին:

Այս ընդհանուր թոհուրէն մէջ զժուար, շատ զժուար է ճշմարտութեան վանգակը հնչեցնել՝ մոլորածները սթափեցնելու, խելայեղները խելաբերելու համար: Յաճախ՝ այս նպատակով թափուած գեղեցիկ ճիգեր ապարդիւն փնայում են:

Եւ երեւոյթը կը շարունակէ ապրիլ մամուլին մէջ, խնդարութիւնը օրուան տիրական մեթոտն ըլլալու պատիւը վայելեալով:

Սմերիկայի թերթերը թղթատելով այս օրերս, անոնց մէջ կը տեսնեմ ամէնէն ընդվզող օրինակներէն մէկը այս գարշելի սխթեմքի գործադրութեան: «Հայրենիք» յեղափոխական մարտը և հրահրիչ բանբեր կերեւայ որ իր դէմ կարգ մը հակառակութիւններ ծնուցած է, անոնցմէ որոնք միշտ կը բուսնին երբոր նախապաշարութեան վանելու, ազատութիւններ մարտերու, ցածուութիւններ աւելու փրկարար ու զժուար գործին կը ձեռնարկեն յանդուզն յեղաշրջիչներ: Ամերիկահայ թերթը՝ Սասունի գառնաղէտ կացութեան մասին հրատարակած տեսութեան մը մէջ խօսքը ուղղելով մէկ քանի շոշորթներու որոնք «գրգռուելու ուրքի ելլալու Լամանակը զեռ չեկած կը յայտարարեն», սա տուրքերը գրած է արդար զայրոյթի շեշտով մը. «Եթէ այդ տխմար շարախանները հետեւողական են ու արամբան, ճիշդ հիմա ժամանակն է որ իրենց կնիկները տուած Սասուն վազեն, և եւթարկուին թիւրքերու և քիւրտերու պահանջին, զորմի վրայ ցուցնելով իրենց համոզմունքներուն անկեղծութիւնը...»

Հայաստանի մեր հէք անտէրունջ քոյրերուն անհանդուրժելի տառապանքը հասկնալ և ըզցալ շուրջ մեր արտասահմանի կուսակցամտութեամբ կուրցած ախմարներուն հասցէին ուղղուած այս քանի մը բառերը ինչպէս կուզէք որ մեկնեն ուրիշ թերթի մը՝ «Ձայն Հայրենեացի պատուելի պարոնները, Այդ բառերուն «Հայրենիք» կուզէր Հայաստանի հայութիւններուն կացութիւնը մատնանիշ ընել և անտարբերներուն կարծը անզգայութիւնը ապուակել. եթէ մեր քոյրերուն օգնութեան հասնելու ժամանակը չէ, ուրեմն այդպէս նկատողներ թող իրենց կրնե՞րովը երթան ապրիլ այդ գոտիքին մէջ, և տեսնենք թէ այլ եւս համամիտ պիտի ըլլան իրենց մասին ալ նոյն մտածումը ունեցողներուն:

Արդարացի դիտողութիւն չէ՞

Արդ, «Չայն Հայրենեաց» իր պաշտօնակիցը վարկարեկելու գիտումով խեղաթիւրման ճամբուն կը դիմէ իր նպատակին հասնելու համար. կը յայտարարէ որ իբր թէ «Հայրենեաց» հայ կենս վատաւր օտնակոխ ըրեր է հրաւիրելով զայն որ Հայաստան երթայ քիւրտին թիւրքին կիրքերուն նշտակ դառնալու. Եւ ահա, դատաւր թեմէ զուրջ ոչ ոք մեղքեր, հալած եղի պէս կ'ընելով այս մեկնութիւնը, կը սկսին յարձակիլ «Հայրենեաց» ի վրայ. Հայուհիներ՝ խաբուած՝ բողոքներ կը հրատարակեն, կարծելով որ իրենց պատուին դէմ դաւաճանուած է. Ազգուկ մըն է կը փրկի. Խեղաթիւրողները կը շարունակեն իրենց գործը. Եւ նոյնիսկ մոռցուած է այն խօսքը որ նախապատճառն է այս ամէն իրարանցումին. միայն խեղաթիւրողներուն զրպարտանքը մէջտեղ կը կենայ. «Հայրենեաց» հայ կենս պատուին դպեր է. «

Խեղճ ոչ ոք մեղք, միամիտները, անդիտակից եւ տիրացու, որ աւելցուտ տեղը կը փրկուին, կը պտուան, կը խանչեն՝ զո՞հ երթալով խեղաթիւրման ոգիին՝ այլանդակ տիրապետութեանը:

Ասիկա թարմ է ընթացիկ օրինակ մըն էր որ բերի՝ բնութան արդարացիմանը համար. Արտասահմանի մամուլը հիմնուած օրէն՝ անոր սերմն ալ հետը ցանուած է. կը բողոքի՝ ան շարունակ, շնորհիւ անոր կանանց մնալը փափաքողներուն փութաւ. Չանութեանը, որոնք այդ թուանաւոր յունկին արմատը կը ջըրեն ու կը ջըրեն:

Ապրիլն.

Շաւարշ

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Տիար Սարգիս Գարբիէլեան Օրիորդ նարինէն Թոյմասեանի հետ իր նշանախօսութեանը առթիւ 50 Քրանքնու իրած է տեղւոյս Ազգ. վարժարաններու Սանուց ընկերութեան:

Տիար Գարբիէլեանի այս ընթացքին՝ կը յուսանք թէ հետեւողներ պիտի գտնուին:

ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԸ ԷՋՄԱՍԹՆԷՆ ՎՈՆՏՈՒՍԾ

Թիւրքից 12 հոկտեմբեր

Իրենց Հայաստանի օճախները դառնալու համար սուս և թուրք սահմանազրկուած վրայ հաւաքուած յուսահատ հէք գաղթականներն ու թնհարիւր հոգի՝ անօթի և անպատկար գիւնեցին Ս. Էջմիածին, իրեն յիտին սպաւէն. Ս. Հայրապետը՝ Արիման Հայրիկ գարձնել տուաւ. Լուսաւորչայ մեծանուն տաճարին զաները, և մերժեց ընդունիլ հայ տառապանքին այդ կենդանի ու ցաւազին ներկայացուցիչները: Գաղթականները, որոնք կը յուսանին հայ կրօնքի այդ մեծ խորհրդանշանին հովանիին ներքեւ պահ մը շունչ առնել՝ վանուեցան. Ռուս ոստիկանութիւնը՝ սշխարհի բոլոր ստիկանութիւններուն ամէնէն վառն ու անարգը, այդ խեղճերէն շատերը ձերբակալելով բանտարկեց՝ անոնց էջմիածին մտնելու պիտու աններկի յանդգնութեանը համար:

Տեղւոյս կառավարութիւնը մէկ կողմէն, հայ կղերականութիւնը մյուս կողմէն՝ կը ջանան համ զել գաղթականները որ ընդունին ոտս հպատակութիւնը Բայց անոնք չեն ուզիր իրենց գոյութեան զիմ արուած այդ ձուգակին մէջ իյնալ:

Շատ յոռի սպաւորութիւն գործեց իս հայ գաղթականներուն էլ՝ միածնին դատած այս անակնկալ ու վայրագ ընդունելութեան լուրը:

Ուրեմն այս խեղճ անախրուջ հայերը ոչ միայն օտարներէն, այլ

նոյն իսկ իրենց ազգակիցներուն օգնութեանը զրկուած են: Թուրք կառավարութիւնը բացարձակապէս մերժած է ընդունիլ զանոնք: Իսկ Չայրին աստուածակազան կառավարութիւնը իր կրօնին մէջ ձգել կուզէ անթիւ հայեր, որոնք ցեղը պիտի յաւերժացնելու ծառայեն հայրենի հողին վրայ:

Չանուր կը մտնայ ահա որ և մահացուցիչ. ձիւնը կը տեղայ անուրք հանգալտութեամբ. բոկոսն, կիսամոլորկ հայերու լէզոններ՝ խոպան լեռներու, դաշտերու նեղ սանձանի մը մէջ նետուած՝ յուսակաուր կը թափառին, աշխարհի մէջ չունենալով մէկը որ իրենց աննախընթաց կացութեան կրեկցելով ընդունի զիրենք: Հայոց սիրելի Հայրիկն ալ, ան որ սղքատին միթիթարութիւնը, անպատկարիւն սպաւէնէն էր, ան ալ՝ գայմաններու դժուրութեւր պահանջումովը կրտալուր իր սիրելի Հայաստանին դաւակներուն երեսին Լուսաւորչայ ստատածային տան դուռը անակնկալութիւն փակել: Պատմութիւնը պիտի այժանագրէ այս անուր գէղքը:

Գաղթական

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնտոն, 1 հոկտ.

Չարթուումի և հիասթափումի ներկայ օրերուն, ուր արտասահմանի հայութիւնը՝ մեծ մասամբ մաքսաման ու վրէժի սգիւղ մը հրդեհուած՝ հայրենիքի փրկագործ մին մէջ զեր մը կատարելու այնիւ ճիղերը կ'արտայայտէ, արգիւն Լոնտոնի հայ գաղթիւրք տարածութեանը մեր հայրենեան և մեկուսացումի դժբք մը կը բռնէ. անձնկար և սակաւութեան երանաղեղ հնչատիքներուն ու երջանկաւէս կենցաղի մը հաճոյքներուն անձնամատոյց: Գիտակից ու ցաւող սրտերու պարտքն է ամէն առան սայրասուր նշգրախով մը պատուել մաքրել այն պայարները որոնք կը գոչանան մեր ազգային կեանքին վրայ: Լոնտոնի հայութեան հիմակուան ներկայացուցած կացութիւնը շարուտ պալար մըն է, վրարութեան բիրտ գարմանի՝ ը կարօտ:

Ազգին գործերուն և օտապանքներուն անտարբեր, տեղւոյս ջոջ հայութիւնը բոլորովին անմասն կ'ապրի այն զօնքակ շարժումէն, որ առաջ կուգայ հայութեան հոծ շարքերուն մէջ ամէնուրեք: Մեռած ստակած հայութիւն մը. որ Լոնտոնի հոծ և հսկայ ա'բուխի մէջ անյայտանալու, աննշտակի դառնալու մտահոգութիւնը ունի միայն:

Այժմ անգլոնոս հայերուն թիւն է իբր 400, ամէնքն ալ զոհացուցիչ զիրքերու տիրացած: Կարեւոր մէկ մասը առեւտրական աշխարհին մէջ նախանձնի դիրքը գրաւած է. Թուրքից, Ռուսիոյ ու Եւրոպայի գրեթէ ամէն կողմերը անոնք ծանօթ են իրենց մասնաձիւղերովը. վերջապէս հարուստ մարդիկ են, որ մեծ ճարտարութիւն, մեծ ընդունակութիւն ու խելք ցոյց կուտան ոսկիի գէգեր ձեւացնելու դժուար գործին մէջ, բայց որ շնական ձեռնպահութիւն մը ունին ամէն բանի համար որ աղքատի է, հայկական է:

Մինչև իսկ խեղճ ու օգնութեան կարօտ հայերու դիմումներէն զերծ

մնալու համար, անոնք քաջուած են հոս հոն. անձանօթ, անձանօթիսելի անկիւններ. և և ի՞նչ դիպտածով խեղճ հայ մը անոնց սեւէն շերտ օսք դէ՞, լուսանքներու և յիշոցներու պոթիկոսք մը կը գրմառնէ զինքը: Եւ ի՞նչ դիմելու միջոց ընտրուած է այդ տեսակ դիմումի մը պատգամին բնաւ չերեւալ: Ոսկեբաքձ այս դոմէնները, սակաւն, ի հարկին չեն քաջուելու սպաւէն շնթիւլ. Մենք ալ աղքատներ ենք... մենք ալ յիշողութեան ենք... Արդէն ամէն հայ յեղափոխական եղած է այսօրն տառապանքներէ կտաք, բայց մենք կարող չենք բան մը ընել, բանի որ Թուրքիոյ մէջ մեր շահերը կը լիտուրին: Աստուած մի արասցէ...

Այս ատիկը գրողը շատ հեղ ընկնիլը կը գտնէ սուս կարգի միտուած խօսքերու:

Ոսկեբաքձներուն կը յաղորդէ խաչապողներու ստուար ծակաւք ջողերը, որուն վրայ բաւական գրուած ըրաւով ասկէց ստալք առաջմ հարկ չեմ տեսնիր անով զբաղիլ, բայց օր մը ուրոյն ինքնակցութեան մը նիւթ կը նայ դառնալ:

Գաղութիւն մեծամասնութիւնը զանազան գործերով կը զբաղի. զբարգրութեամբ, բանուորութեամբ և արհեստներով: Ասանցմէ շատերը, հարուստ վաճառականներուն պէս, արտարիւր անդայ մարդիկ են, միջակայքին ընծայած շրջանցիկ պայմաններուն մէջ ամէն բան մոռցած ու հոգեկանապէս ինկած:

Ու այս ցաւալի պարտաւորներն փոխարէն կոյ սրտուտ, աշխուժ, զրտակից երկատարներու փոքրաթիւ խմբակ մը միայն, որոնք ամէն շաբթու տեղ մը ժողովներով կը ջանան անտարբերներուն սիրտը գործելու և հրաւրել զանոնք: Իրաւէ որ այս փրկարար գործն ալ ժամանակ մը ի վեր թուլացած է՝ անգաւնրուան անհոգութեանը հետեւածք:

Կարճ խօսքով. Լոնտոնի գաղթութիւնը յուսահատեցուցիչ պայմաններու մէջ կը գտնուի:


Սպարդ

ՄԵՌՈՒՆԵՐ

Վառնայի յուղոցներուն մէջ առտու, ցորեկ և իրիկուն զարդական աղջիկներ կ'երևան. կարմիր բարակ ժապակէներն ծածանեցնելով մէջքերն են վար: Ասիկա ոչ պուլկար, ոչ յոյն, ոչ հայ զուղոցներու համազգեստն է: Ծիք, և բողոքական բան մը կայ այդ ժապակէնազարդ օրիորդներուն գնացքին ու շարժումներին մէջ, Բոնագրութիւնը կ'ապրու թեան հետ համարալուսած է անոնց վրայ: Անոնք սկստերու դպրոցին աշակերտուհիներն են:

Հոս ալ կան այդ յուրանական աղջիկներէն, ձերմիտսիկ, սեւ ալեւծածան հանդերձանքներուն մէջ սիրուն և զրգոտ, մանկային դիմաքձերուն վրայ չես գլխեր ինչ անմոռանակ, հանգարտ ու անգործխարհիկ հով մը կրելով: Հետո ներկն եկած այդ միանձնուհիները, առաջին ակնարկով, սփոփանքի, մայրութեան, դարովի զգալութիւն մը կը սրբագրուեն. դիւցազնապէսներու, միջնադարեան ստեղծական արտաձեւիւններու կրօնահիւնդուն վերյուշումը կուրենաւ:

ԵՐԹԱՍ ԲԱՐՈՎ



(ՊԵՐՈՍ ՍԵՐԵՃԵԱՆԻ ՍՈՐԸ ՅԻՇԱՍԿԵՆ)

Երթաւ քարով, ո՞վ քայ շրջիլ իմ սիրուն, Գեա՛, կրեաւ ապրիլ միայն դու կուտով. Ինչո՞ւ զոնեմ ազգանքիդ քաղ կորով՝ Իմ մայրական սիրտսոյն յոյսերուն:

Գեա՛, և սուր արօթներս քեզ ընկեր. Ըլլա՛ն այդ վեհէ՛րայց զժողովն գործի մեջ կուտե՛ անդո շ լուսնդովը քաղ անշեք՝ Արիւնկազակ զազանիս դեմ մարդիկ:

Գեա՛, դիպի և պատկար ընկազիկ, Հայ և երեսնակ քարոս անտիւնէ՛ քայի վեհ. Պիտի ցնձա՛ւ հայրենի ին՝ ճարտով՝ ա՛ Չոն մը քեզ ով, ո՞վ շուն կիսակ ընթալ կեանքիս:

Ե՛կ քաղ վերջին համբոյր անկախ անբասիր, Յիշե՛՛ցրման դու մայրական իմ պատուիր. Եւ ևս րեկեաց զրօշը միշտ պահե՛՛ վեր. Օ՛ն, աչ զու ա՛լ, զեա՛ յարքի, կա՛ն ւնեւիր:

ՎԵՍՍ

Բայց իսկապէս այդ ճերմակ, մեղ-  
րամտի խափանցութեամբ կրօ-  
նակները աղէտ մըն են, որուն կը  
ենթարկուին արեւելքի հէք անդի-  
տակից քրիստոնեաները, մասազ սե-  
րունքներու դատարարութեան փա-  
փուկ գործը այդ վասնդուոր ազգի-  
ններուն վտանգով: Կ'նա սր որ  
կուզես, պիտի անեն կաթողիկէ կը-  
րօնական հաստատութիւն մը, որա-  
կան կ'ան իրական, մասնաձիգիւր  
աչք կրօնական հիմնարկութիւննե-  
րուն որոնք քանդուաբեր եղան ի-  
րենց կեդրոնակներէն մեծ Ֆրանսա:  
Երկար ժամեր կրօնական վան-  
կան դատարարութիւնը Ֆրանսայի  
գլխաւոր կախում աղէտներէն մէկը  
եղաւ: Սերունդներ՝ այդ ապականա-  
րար միջոցառումն մէջ փճացան կ'ը-  
ստեցան: Ու դեռ նոյն, ազատու-  
թեան այդ մեծ երկրին մէջ, կարե-  
լի եղաւ արեւ ասիոյ ընել Բաթիւր-  
անընէն եւ Ալեքսանդրիայի միջակայ-  
քի միջակայքը, որոնցմէ անխնայ  
զորս խափուեցան վանուեցան այդ  
ստեղծարար արարածները: Ֆրանսա,  
ճանրածանր բեռէ մը ազատուած  
լայն շունչ մը առաւ՝ կրօնական միա-  
բանութիւններուն իսկապէս կործանու-  
մով:

Աղէտը, սակայն, մեր գլխուն  
վրայ է, այդ կեղծապարծիք Բաթի-  
րանին ու անուշաչաւ սիրուն սէօ-  
սերը իրենց շահատակութեան բոյ-  
նեքէն զորս նետուելով ուրիշ եր-  
կրներ թափեցան, շահագործութեան  
յարմար բեղմնաւոր գետիններու հե-  
տաւոր:

Վասնայի քիչ Թոգեաներու և սխո-  
րու երկու փորձարան կայ: Աղէկ  
գործ կը անստան կոր: Երկն ողորմելի  
ճնորդները՝ անէն ազգէ, ընդ որս և  
նայ, իրենց զաւկներուն փրանքերն

ստեղծելով յիմարմամբ ճշնունեւած  
զանոնք կը հանեն իրենց ազգային  
դպրոցներէն ու կը ասան կը յանձ-  
նեն դատարարութեան այդ միջ-  
բույններուն ձեռքը: Երկն աղաքը,  
երկու սեռէ, սարիներով կերթան  
կուզան այդ դպրոցները, յախտեա-  
կան ֆաթիլիզը գոց ընելու դժու-  
րանքին պարտաւորութեան ենթա-  
կուած և, աւա՛ղ, նոյնիսկ չարքի-  
ւով այն ֆրանսերէնը որուն սիրուն  
տարած նետուած էին այդ խղճուկ  
գոբերուն մէջ:

Հայ ճնորդներ, սնամիտ և անհե-  
ռաւան, ազգային վայժարաններու  
ճրայ իրենցուն շահունելու յաւակնու-  
թեամբ, կը բռնեն իրենց մանուկ  
կամ աղջկան ձեռքէն ու կը տանին  
կաթողիկէ վարժարանները: Եւ աւելի և  
սրտաշարժ է անհեղ տարիներու յա-  
ճարմանէ յետոյ քանի մը ֆրանսերէն  
կցկտոր բռնար կակաղող ինկնուկ  
այս տղաքը՝ աղէտ, յաւակնոտ և  
անկիրթ: Պարապը վատնուած տա-  
րիներուն արդիւնքը ոչնչութիւն է:  
Գոնէ այդ դպրոցներէն ելլող աղջ մը  
երկու տող անսխալ ֆրանսերէն գրել  
ստիպած ըլլայ: ան ալ չիկայ: Ու և է  
գիտութեան մասին նոյնիսկ նախա-  
կան ճանթութիւն մը, թուա-  
րանութիւն, աշխարհագրութիւն  
պատմութիւն և այլն տարա-  
մեթօքէն տեղի սուած են անտանելի:  
Գետին տակը անցնելիք ֆաթիլիզ-  
մին, դատարարութիւնը բոլոր  
սչ-կաթողիկ տղայ որ բաթիւրաններուն  
և սէօտերուն ձեռքին տակ մանալու  
ոճրին գո՛ր գոցած են:

Չեմ գիտեր ինչպէս ևս կեցնելու է  
մեր հայ ճնորդները իրենց այդ փոքուն  
աննպատակ գաղափարէն, այն է ար-  
դըց ֆրանսերէն ստիպեցնելու ունայն  
խառնարկութեան մը մըրած՝ ասանլ

օտարին յանձնել մասաղ, սերունդը  
որ այնքան պէտք ունի ազգային դատ-  
արարակութեան բարձր վարելու, և  
մեծնալու ազգայնութեան տաք ոգի-  
ով, ստիպելու հայ պատմութիւնը,  
ենթարկուելու հայ դատարարին  
խղճամիտ մեթոտին:

Սխալ, բացարձակօրէն սխալ է ի-  
րենց այն ըմբռնումը թէ ստիպուած  
երկու բառ խնցրելի ֆրանսերէնը կը-  
նայ ու և է օգուտ ունենալ: Այդ  
երկու բառին փոխարէն, սղան և  
աղջիկը՝ կաթողիկէ կրօնակներու  
կամ բաթիւրաններու շունչին տակ  
կատարին, կ'ապականուին, անշը-  
նորէք, անպէտ արարածներ կը դառ-  
նան, խեղ չունենալով ոչ իրենց ան-  
կէն, ոչ իրենց ճնորդին և և հետե-  
ւապէս ոչ ալ մանաւանդ ազգին:  
Վերջապէս պէտք է նկատել որ այդ  
արարածներուն բուն հայրենիքը Ֆր-  
անսան, ուր դարերէ ի վեր անոնք  
գոյութիւն ունէին, իր ծոցէն դուրս  
նետաց պանոնք, իրրեւ սերունդ-  
ներու կործանարարներ: Ինչք ինչու  
իշխանք անոնց ձեռքակիր մէջ, մեղք  
ու աւօթ չէ՞ մեզի:

Ե. Ս

**ԹԱՏԵՆԱԿԱՆ**

Նորակազմ Պապական Թատերա-  
խումբը սկսած է արդարացնել իր վը-  
րայ գրուած յուսերը: Անգուլ ան-  
խնջ աշխատանքը, զոր այդ աղ-  
նիւ կրօնատաղէտները յանձն առած  
են կատարել, իր արդիւնքները տա-  
լու վրայ է: Այլ տարակոյս չիկայ  
որ Պոլկարիս մէկ հատիկ տրամա-  
թիւրական խումբը պիտի ըլլայ երի-

**ՔԱՆՍՄԱՐԱԿԱՆ**

**ՎԵՐԱԾԻՆ**

ՄԱՍ Բ. 31  
ԴՆՈՒՆ Դ.

Հեղինէ և Ծաղիկեանի ունեցած  
բացարձակ իրենց յետոյ հաղիւ տաս  
որ էր անցել, երբ մի երեկոյ Ծաղիկ-  
եանի նա Հեղինէի սենեակը մտաւ  
և մի երկտասարդ հայ հոգեւորական,  
Հեղինէի մարք հոգեւորականին տես-  
նելով նախ մնաց զարմացած, ապա  
ակնաւորով մտնեցաւ և նրա ձեռ-  
քը համբուրեց: Հեղինէի շրթունք-  
ները վրայով մի ժպիտ թուաւ, գրե-  
թէ աննշմարելի կերպով, իսկ Ծա-  
ղիկեանը արտասովոր լրջութեամբ  
տիկնին բարեւոյցը յետոյ տեղա-  
ւորվեց անկիւնում գրված աթոռի  
վրայ:

Մի երկու րոպէ խորհրդաւոր լուռ-  
ութեւ տրեց սենեակի մէջ, կարծես  
ոչ ոք չէր համարձակուած լուռութեւնը  
խանգարել: Վերջապէս տիկնէն խը-  
ղեց այդ լուռութեւնը գիմնելով կրօնա-  
ւորին:

—Ճիշտ հայր, ներողութիւն, ես  
ձեզ չեմ ճանաչում, բայց ամօթ չը  
լինի հարցնելը, պարզ այցելութեան  
համար էք եկել, թէ գործով:

—Այո, տիկն, ես եկել եմ քրի-  
ստոյ Հեղինէի և պարոն Ծաղիկեանի  
խնդրանքով: Նրանք ինձ աստիճար-  
կեցին որ գամ ևս այս գիշեր իրենց  
պալատի և կ'սքսեմ գուք գրա դէմ ոչ-

ինչ չունէք:

Տիկնէն մնաց քարացած, նրա բե-  
րանք վակվեց, շրթունքները կար-  
ծես իրար մէջ միմիկեցին, քիչ մնաց  
աթոռից վար ընկէր, Հեղինէն վա-  
զեց մօրը բռնելու, բայց նա ուշքի  
եկաւ և կատաղութեամբ աղջկան մի  
կողմ հրելով ծվաց:

—Հետո աչքիցս, անամօթ աղջիկ  
դեռ համարձակուած ես մտնելու ինձ  
սեւ լինէր քեզ աշխարհ բերածս օրը:  
Ո՞վ Աստուած, աշխարհը տակն ու  
վրայ է դարձել: Դեռ ո՞վ գիտի ին-  
չեր պէտք է սեանենք: Աճա քեզ  
ուսում: Աղջիկները համար ուսումը  
հնարովի վրէժ փորումը մնար: Իսկ  
դու, սէրտեր, չես անաչում կար-  
գիցդ շնա քաշում և համայնիւրով  
այս անամօթներին հետ գալիս ես ինձ  
և և իմ արթնքը տունը խայտառակե-  
լու, մեր պատիւը հողին հաւատա-  
րացնելու համար:

—Ոչ, տիկն, սխալվում էք, պաղ-  
արկունութեամբ վրա բերեց կրօնա-  
ւորը: Ես եկել եմ իմ կրօնաւորի  
պարտականութիւնը կատարելու, մի  
ազնիւ օրիորդ եւ մի ազնիւ երկտա-  
սարդ, որոնք իրար սիրում են, ինձ  
խնդրել են պալատի և այդքանը բա-  
ւական է ինձ համար: Իմ աւետա-  
րանը ինձ պատկերում է այդ սեռակ  
ամուսնութիւններ կնքել:

—Բայց ճնորդքը, բայց նրանց հու-  
մաճայնութիւնը:

—Պատկի խորհրդի մէջ այդ մասին  
ոչ մի ակնարկութիւն չը կայ: մա-  
նուանց երբ ամուսնացողները կա-  
տարելանասակ են: Մենք պատկի  
խորհուրդը կատարած միջոցին աղջ-

կան և տղային ենք հարցնում, «հա-  
մաճայն ես, թէ ոչ» ու ճնորդներին  
ոչ մէկ հարցում չենք ուղղում:  
Կարծեմ ձեզ էլ, տիկն, այդպէս են  
պատկել:

—Սեւ լինէր այն օրը, երանի թէ  
ինձ էլ չը պատկէին, այս փորձանք  
աղջիկն էլ աշխարհ չէր դար: Բայց,  
տէրտեր, աղաչում եմ, խնայիր ինձ:  
Սկսոր մի պաակիր, Ազգայնում եմ  
ձեզ, երեքդ էլ: Փամանակ աւէք:  
Կ'անք մեր տունը, այնտեղ կը պը-  
սակենք: Հեղինէս, հոգիս, դու պի-  
տես թէ հայրդ ինչ տեսակ մարդ է...  
ես անանց քեզ չեմ կարող տուն վե-  
րադառնալ: Ինձ կսպանի, խղճացեք  
ինձ:

—Դու տուն չես վերադառնալ, մայ-  
րիկ: Ինձ մօտ կը մնաս: միասին կը  
մնանք: միջամտեց Հեղինէն: Հայ-  
րիկը եղածի հետ կը հաշտվի: Վեր-  
ջապէս դու լաւ դիտես որ ես անանց  
Ծաղիկեանի չեմ կարող մնալ: Ան-  
պատուութիւն չը կայ, մայրիկ, ես չեմ  
փոխում: ամուսնանում եմ օրինա-  
ւորապէս, քո ներկայութեանը:

—Չէ, չէ, Հեղինէ, հեծեծալով ա-  
նարկեց ընկճված մայրը: Հայրդ և  
զանք հետ չի հաշտվի, Ծաղիկեանը ոչ-  
ինչ չունի, հայրդ քեզ ոչինչ չի տալ:  
որո չքաւորութեան սովը չես, Ծա-  
ղիկեանի խնդր բարձր տեղ է: նա  
կին պահելու վրա մտածելու մամա-  
նակ չունի: Աւելի լաւ է սուեն վե-  
րադառնանք, հորդ կամքը անհեղ  
քաղցրութեամբ համոզենք: Ես կա-  
ղաչեմ, դու կաղաչես: Ես Ծաղիկ-  
եանին շատ է յարգում: Երբ համոզ-  
վեց որ դու հաստատապէս սիրում ես՝

տասարդ հայ ուժերի կազմուած այս  
թատերական մարմինը:

Շարժի գիշեր, Ձեռնածուին ներ-  
կայացմանը, Պապական դրամակից  
արուեստագետի մը ապաւորութիւնը  
թողուց:

Ձեռնածուին յուզումալից խաղ  
մըն է, իր բոլոր պայմանագրական  
գոտերի կողմերով: Սակայն, յայտ-  
նի բան մըն է որ կ'անքի էն սովոր-  
ական պատկեր մը թակ գոյն, երանգ-  
ոգիւրութիւն, աշխուժ կստանայ  
երբ զայն ներկայացնող, բացարձակ  
անձը բնական արաայատու մին կը  
խառնէ արուեստին դիթութիւնը:

Ձեռնածուին ժողովրդային ինկած՝  
բայց սիրուն թիւր մըն է: ածական-  
ճաւնեւու ածպարարի ծիծաղաշարժ  
պատկերատ, զուարճալի եւ խաղաւոր  
մարմնացու՛ր, Պապական կենդանա-  
ցոյց, մարմնաւորեց այս տիպարը:  
կատարեալ, անթիւրի ձեռնածու մը  
եղաւ: Ոչինչ կար սակի բնական  
աւելի տպաւորչ քան տեսարանն ուր  
ձեռնածուին իր աղջկան կարգացած  
մէկ թուզվէն յանկարծ լուացաւ թէ  
այդ աղջիկը, որուն դէմ լարուած  
քաւին կը մասնակցէր դրամի փոխա-  
րէն, թակապէս իր գուակն էր, իր  
արեան ու միսին կտորը: Դէմքի ար-  
տայատուութիւն, զարմանքի, ապ-  
շուժեան, կակիծի, զղջումի աւէն  
նշանները մէկ քանի րոպէ: ցուացան  
Պապականի կեցուածքէն: Ճիւղ ձգ-  
տած, աչքերը զարճուրապէս սեւեւ-  
մամբ, մարմինը պիւր ու միջնախճ-  
կուած, Ձեռնա ուն մտիկ ըբաւ այդ  
քանի մը չլմորեցոյցի բոտերը: Ու  
պոթի կուտը, քայքայումը չու շացաւ,  
աղջկան դէմ անգիտակցօքէն դառող  
հայրը ստրկանքի ազմկայից զղջում-  
ներով իր դաւկին առջեւ ինկաւ:  
Այս գերազանց պարագային բոլոր  
կը համաձայնի:

—Ոչ, մայրիկ, ես հորեցս ոչինչ չեմ  
ուզում: Ես նրան շատ եմ աղաչել:  
Ես ինքս կարող եմ իմ աշխատան-  
քով իմ գրուելը պահել, Եթէ ձեր  
աղջիկը չէր կարող աշխատել, Ծա-  
ղիկեանի կինը կարող է աշխատել:  
Եւ իմ ամուսինը դրա դէմ ոչինչ չի  
ունենալ, որովհետեւ աշխատութիւնը  
անպատաւար է: Իսկ երբ տեղա-  
ւոր լինեմ աշխատել, աղիկեանը իր  
ամուսնական պարտականութիւն-  
ները կատարելու ընդունակ է:

—Ուրեմն ձեր սրտումը վերջնա-  
կան է: անպատաւ ախոր, հիմա,  
այստեղ պէտք է պսակվէք:

—Այո, մայրիկ:

—Ես այստեղ չեմ կարող կենալ:  
ներկայ չեմ կարող լինել, ինձ ուրիշ  
տեղ տարեք, ճամբու դէք ինձ սուեն  
այսօրվայ գնացքով:

—Ոչ, մայրիկ, իմ պսակը քո ներ-  
կայութեանը պէտք է լինի, մայրիկս,  
հանգստացիր, հաւատացնում եմ քեզ  
որ իմ այս քայլի մէջ պախարակելի  
ոչինչ չը կայ: Եթէ խղճիդ հարցնես,  
դու էլ իսկոյն կը համոզվես: Ես ու-  
զում եմ քո մայրական օրհնութիւնը  
անպատաւատ ստանալ, քանի որ այս-  
տեղ ես գտնվում: Ու այս իտքերի  
հետ Հեղինէն փաթաթվեց մօր վը-  
ղովը ու սկսեց նրա շրթունքներին  
այտելին համբուրել տեղացնել:  
Մայրն էլ աղջկայ գրուելը գրկեց ու  
բարձրաձայն լալով թոթովեց:

—Ախ, խնթի աղջիկ, խնթի աղ-  
ջիկ:

(Շարունակելի)

դժուարին հոգեբանութիւնը այդքան ճարտարէն արտայայտուած արուեստագէտներին զգայնորէն սիրաբար քերական հիմնապէս ըմբռնուած ըլլալը ապացուց :

Անուարանլի է թէ Պապական խղճամտօրէն աշխատող արուեստագէտ մըն է : Իր յամառօրէն հետապնդած նպատակին պիտի հասնի . ուշ կամ կանուխ հասարակութիւնը պիտի վազէ իրեն զրկարաց : Արդէն , լեցուն սրբահնէրու առջեւ է որ հայ դերասանները իրենց արուեստը կը պարզեն . հակառակ կարգ մը մարդոց ենթադրութեանը , որոնք այնպէս կուզէին հաւատալ եւ հաւատազնել թէ Պապական իր ձեռնարկին մէջ պիտի ձախողի , եւ առաջին յայլերէն իսկ յուսահատ պիտի կանգ առնէ : Սխալ , եւ մեծ սխալ :

Պապական եւ իր ընկերները գեղեցիկ , շինիչ գործի մը ձեռնարկած են . անկարելի է որ քիչ ատ զիտակից հասարակութիւն մը անտարբերութիւն ցուցնէ այդ գործին համար : Արդէն իսկ , թատերասիրական նոր ոգի մը սկսած է արժարձուլ թէ՛ հայ եւ թէ օտար հասարակութեանց մէջ : Համակրութիւն մը սկըւած է յորս կողմէն շրջապատել Պապականն ու իր գործակիցները : Լիարյոյս ենք թէ կատարեալ յաջողութիւնը քիչ ատենէն պիտի ողջունէ զանոնք :

Կը հրաւիրենք տեղւոյս հայ երիտասարդութիւնը զօրավիգ հանդիսանալ մեր թատերասիրութեան յատկաբնութեանը եւ յաջողութեանը . վրան զի պատիւը զուտ հայութեան է իբր օտար երկրի մը մէջ , թատերական արուեստին անմրցելի ներկայացուցիչները հայ երիտասարդութիւնն ու հայ տաղանդը հանդիսանան :

Ե. Ս.

### ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆՆԻԿ

Էս թիւը—Աւէսթի գործակալութիւնը կը հաղորդէ թէ Խարիզի հայ ուսանողները մտադիր են մօտ օրերուս մէջ ընկերական երեկոյթ մը տալ . ասիկա վերջնականապէս որոշելու և յատուկ մասնախումբ մը կազմելու համար այս շարժու տեղի պիտի ունենայ հայ ուսանողներու ընդհանուր ժողովը : Առանողները մտադիր են կեդրոնատեղի մը վարձել որ իրենց հաւաքումներուն մշտական վայրը պիտի ըլլայ : Կը հաղորդեն թէ կեդրոնատեղիին պատճառած ծախքերուն զիմադրելու համար ուսանողութիւնը կարողացեր է եռամսեայ մօտ հարիւր ֆրանքի շուքի գումար մը ապահովել : Թէ՛ անդամակցութիւններէ և թէ՛ մասնաւոր նպատուներէ :

—Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս Խաչատրեանի եպիսկոպոսէն զեռ ձայն ձուն շկայ եղբեր , ինչպէս նաեւ Երուսաղէմի պատրիարք Յարութիւն սրբապանէն , որուն կրկին և կրկին անգամ հեռապրտեր է ընտրութեան լուրը : Արդեօք Խաչատրեանն ալ Երէջեանին քով պիտի գնենք , իսկ զճ Կիլիկիոյ թեմ :

—Անցեալները Յովհաննէս Կիւմշեան մեռնելով Մարտիկոյ մէջ 10.000 ոսկիի գումար մը թողուցեր է ազգին , զանազան բարեգործական նպատակներու համար : Անկէջ կ'օգտուին կեսարիոյ Կիւմշեան վարժարանը , Երուսաղէմի վանքը , Էջմիածինը (այսօրուան թղթակցիին ակադեմիոյ) , Ազգ . Երևանդանոցը և ուրիշներ : Յեղափոխութեան սանթրի մ' շկայ :

—Թիֆլիզի մէջ անցեալները մեռեր է Մարիամ Մակարեան , հետեւեալ գումարները թողուով . 3000 ռուպլի հայոց արամաթիքական ընկերութեան , 1000 ռուպլի Թիֆլիզի երկրաշարժական ուսումնարանին , 1000 ռուպլի Թիֆլիզի Ներսէսեան դպրոցին , 1000 ռուպլի Թիֆլիզի Վերսի հայոց գեղեցիկ տան կեկեկեցիին , 1000 ռուպլի արատանարանի մը , 1000 ռուպլի Թիֆլիզի հայուհեաց բարեգործական ընկերութեան :

—Սեպտեմբեր 15ին Կարսի մէջ մեռնող մահաւետի Յարութիւն աղա Մխչեան 600 ռուպլիի մօտ գումար մը կտակեր է զանազան նպատակներու :

—Սիլվէնի հոգաբարձութեան ընտրութիւնը կատարուելով ձայներու առաւելութեամբ ընտրուած են :

Տիարք հճ. Մարգրիտ Պաքլիան կարապետ Մ. Գոչունեան Ալիքսան Գրգրեան Մարտիկ Գարակէօզեան Հճ. Թաղատր Մ. Գարակէօզեան կը յուսանք թէ՛ նորընտիր հոգաբարձութիւնը առանց իր վաւերացման սպասելու անմիջապէս գործի կը ձեռնարկէ և կը վերաբանայ վարժարանը :

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

«Աւելչեմնա—Բոշթա» թերթը իր Պոլսոյ թղթակցէն կը տեղականայ թէ ռուս զեպան պ. Ձինսօվիթի Սուլթանին առաջարկեր է նորոգել 1833ի Հին քեար—Իսկէլէսիի գաշնագիրը , որով Սուլթանը պիտի լընդունի Ռուսիոյ հովանաւորութիւնը և վերջինն ալ պիտի պարտաւորուի պաշտպանել թուրքիոյ մարզը թիւնը Պ. Ձինսօվիթի յայտարարեր է թէ այդ պարտագային Ռուսիա պիտի զաղրեցնէ ընդ միշտ բոլոր ապստամբական շարժումները Մակեդոնիա , Հայաստան կամ ուրիշ տեղեր . սակայն Անդրիոյ , Աւստրիոյ և Գերմանիոյ զեպանները սեղականալով՝ սպառնացեր են Սուլթանին՝ զահրնկէց ընել զինք . եթէ իր հաճութիւնը տայ : Համիտ ազան խոստացեր է երբէք այդ տեսակ զիջում չընել Ռուսիոյ :

#### Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Երէկ աղգային ժողովին մէջ կարգացուած է զահաճախ համար խմբագրուած պատասխանը , որուն մէջ յիշուած է նաեւ թէ Երեսփոխանութիւնը կատարելապէս համաձայն է կառավարութեան հետ անոր ընթացքի մասին : Իրաւէն անգին կատարուող գէպերու նկատմամբ և թէ իրենք աղգային երեսփոխանները կուտան իրենց պաշտպանութիւնը կառավարութեան՝ բոլոր այն միջոցներուն համար , զորս գործադրելով միջազգային դաշնագրերը , կապահովցնեն Տաճկաստանի պաշտպանութեան խաղաղ զարգացումը :

—Բ. Գուռը յայտներ է մեծ պետութեանց Պոլսոյ զեպաններուն թէ Ռուսոսքի մէջ քանի մը հողեր , որոնք կ'ապեր ունին մակեդոնական կոմիտէներու հետ , մահ կը սպառնան և իր անպարտութեանը եւ թէ տեղական իշխանութիւնները յայտարարած են եղբր թէ իրենք բուն մը չեն կրնար ընել այս պարագային . իբր թէ Երբ թուրք ալ սպաննուեր են :

Կերեւի թէ Հաֆիտ աղան ալ Ռուսոսքի թիւրքերուն համար բարենորոգումներ պիտի ուզէ :

—Ինչպէս յայտնի է , Ռուսանիոյ Գառլ թագաւորը ամսոյս 29ին Ռուսոսքի փոխարձայն յայտնութիւն պիտի տայ Ֆիլիպին նախ իշխանին : Այդ առթիւ երկու վեհապետները պիտի երթան այցելել նաեւ Ռէպլուսի համբաւաւոր պատերազմի դաշտը , ուր 26 տարի առաջ Գառլ թագաւորը—այն ատեն իշխան—իր բունակովը կուտեցաւ այժմեան Պուլկարիան ստեղծելու համար :

Կասկած չկայ՝ որ այս այցելութիւնները աւելի եւս պիտի ամրապնդեն երկու դրացի պետութիւններու միջեւ արդէն իսկ զոյսութիւն ունեցող բարեկամական կապերը :

#### Մ Ա Կ Ե Գ Ո Ն Ի Ս

Պուլկար թերթերուն ըսածին նայելով ձուձայի շրջականները կը շարունակէ պատերազմը թուրք շորքերու և սպասամբ խումբերու միջեւ : Վերադարձները կը փոխադրեն Պոլիս : Սէլանիկի և Սէրի հիւանդանոցներուն մէջ 1600ի կը հասնի եղբր վիրաւորեալներուն թիւը :

—Հիւանի փաշան 25 ջոկատով և հինգ թնդաւթթաձիգ վաշտերով յարձակեր է սպասամբներուն վրայ , զանոնք պաշարելու նպատակով , սակայն չէ յաջողեր . կուրը կը շարունակուի :

—Ձորավար Յօնչէֆը որոշեր է ձեռնը անցընել Մակեդոնիա :

Համակրելի մէնէրային վերջնական որոշումն է եղեք Մակեդոնիան շիթողուլ միջեւ որ ապստամբութիւնը իր նպատակին չը հասնի :

—Մակեդոնիայէն Սօֆիա հասած ճամբորդ մը պատմած է թէ թուրք շորքերը կը խուսափին սպասամբներուն հանդիպելու կը յարձակին զիւրերու մէջ ապստանած կիներու և երախաներու վրայ : Ինքը տեսած է կիներ և 8-10 տարեկան աղջիկներ , որոնց մարմինները ծակ ծակ եղած էին սուխի և գնդակի հարուածներէ :

#### Ռ Ո Մ Ա Ն Ի Ս

Յունաց Երկրիոս թագաւորը յայտներ էր թէ այս աշնան պիտի այցելէ Ռուսանիոյ թագաւորին : Սլոմ Պետկէրուլ թերթը կ'իմանայ թէ Երկրիոս լսելով որ Գառլ թագաւորը Պուլկարիա պիտի գայ , ետ կեցեր է իր Ռուսանիա երթալու գիտաւորութենէն :

#### Ն Ա Մ Ա Ն Ի Ս Մ Ք Ն Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Տէր Խմբագիր ,

Խնդրեմ հաճեցէք ձեր պատ. թերթի միջոցաւ ի գիտութիւն հայ եղբարցս հրատարակել , որ ես ստորագրեալ Բազարճըքի նախորդ տիրացու վարձակաւ Ա. Գուռլու մեծանին անիրաւ և անհիմն արատանութեանց վրայ Երուսղէն տեղս բեցուցայ իբրեւ դող սակայն հարցաքննուելով քաղաքս ոստիկանութեան զուգըմբայ շարչարանները զուտ յայտնուցաւ : Նեաւաբար վրայէս առնուածներն ալ ինձ վերադարձուելով ազատ արձակուեցայ իբրեւ անսեղ :

Հիմա ես ինքս բողոք տուած եմ այդ անիրաւ ճովանային դէմ պատիւս և նիւթական վնասս պահանջուով :

Վստահ եմ որ արգարութիւնը պիտի յայտնուի նոյնպէս դատարանին մէջ , և այդ անիրաւը պիտի գտնէ իրեն արժանի պատիժը :

Առ այժմ այսպիսի : ( )

Կազմուար Սահակ Ներսիսեան

Կառնու 23 հոկտ 1902

#### Թ Ա Ս Ր Ո Ն

Հինգ շաբթի գիշեր պիտի ներկայացուի կեղծ իւսթիկ կամ «13ներու ժողովին անդամը»

3 արար Իր թագաւոր թագաւորութեան թիւն մը

Ուրբաթ գիշեր , «Արդար Հաւատարմութեան» թերթակցի ձեռնոցը

5 արար . 1 պատկեր և ծխաղաչարձ զաւեշտ մը Գին սովորական :

(\*) Այս նամակը կը հրատարակենք սա նկատուով , որ անոր մէջ անպատուաբար բարբոք մը մասնանիք եղած անձը միջեւ վերջերս ուսուցչութեան սպասարկչին մէջ ու է գերը կը կատարէր : Հետեւապէս կը մաղթենք որ իրեն Լիւզա տղի վերադարձը անհիմն ըլլայ :

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница «Взвѣность», Вара